ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Simsom-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/35 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	Առանց շփման, ոչ իոնացնող միկրոմի լիմետրային ալիքներով ակնթարթային սկաններ՝ մարդու մարմնի վրա, հագուստների մեջ կամ դրանց տակ թաքնված իրերի ավտոմատ հայտնաբերման համար	Առանց շփման, ոչ իոնացնող միկրոմի լիմետրային ալիքներով ակնթարթային սկաններ՝ մարդու մարմնի վրա, հագուստների մեջ կամ դրանց տակ թաքնված իրերի ավտոմատ հայտնաբերման համար	Առանց շփման, ոչ իոնացնող միկրոմիլիմետրային ալիքներով ակնթարթային սկաններ՝ մարդու մարմնի վրա, հագուստների մեջ կամ դրանց տակ թաքնված իրերի ավտոմատ հայտնաբերման համար 1. Ընդհանուր պահանջներ 1) Մարմնի սկաները պետք է հիմնված լինի միկրոմիլիմետրային ոչ իոնացված ալիքների, եռաչափ հոլոգրաֆիկ պատկերման տեխնոլոգիայի վրա: Սկաները՝ առանց մարդու մարմնի ֆիզիկական շփման մարդու մարմնի վրա, հագուստների մեջ և դրանց տակ պետք է հայտնաբերի զենք, պայթուցիկ նյութեր, բջջային հեռախոս, մետաղական իրեր, հեղուկ, թմրամիջոց, դեղահաբ, փոշենման զանգված, փաթեթ և այլ օտար մարմիններ: 2) Սկաները պետք է ունանա նաև ինտեգրված ոտքի մետաղական դետեկտոր՝ ավտոմատ կերպով սկանավորվող անձի կոշիկների մեջ, ոտքերի տակ վերը նշված օտար մարմինները հայտնաբերելու հնարավորությամբ: 3) Սարքի մուտքի բացվածքի լայնությունը պետք է հնարավորություն տա դրա միջով անվասայլակով տեղաշարժվելու համար: 4) Սկանավորման առավելագույն

			տևողությունը պետք է լինի 4 վայրկյան: 5) Սարքը պետք է համալրված լինի սենսորային էկրանով, որի վրա անձի սկանավորումից հետո պետք է արտացոլվեն արդյունքները: 6) Սկաները պետք է համալրված լինի ԱՍՃ (Ավտոմատ սպառնալիքների ճանաչում) ալգորիթմով՝ հիմնված արհեստական բանականության խորը ուսուցման վրա: Այն պետք է ավտոմատ կերպով հայտնաբերի կասկածելի օտար մարմինները և դրանք արտացոլի սարքի էկրանին՝ դրանք ցուցադրելով առանձին գույների ազդանշաններով՝ մատնանշելով մարդու մարմնի կամ հագուստի վրա դրանց գտնվելու վայրը: 7) Սկաները պետք է համալրված լինի ազդանշանային որևէ ցուցիչով, ինչը այն օգտագործող օպերատորին կհուշի սկանավորվող անձի կողմից ճշգրիտ սկանավորման նպատակով անհրաժեշտ վավերապայմանները պահպանելու մասին: 8) Սարքը պետք է աշխատի 220VAC - 240VAC, 50Hz/60Hz էլեկտրասնուցմամբ: 2. Առողջապահական անվտանգություն Մարմնի սկաները պետք է վավերացված լինի և համապատասխանի Եվրոպական քաղաքացիական ավիացիայի կոնֆերանսի (ECAC) ստանդարտ 2.1-ի համաձայն: 3. Օգտագործողի կառավարում 1) Բոլոր օգտատերերը պետք է խմբավորվեն որպես օպերատերեր, ադմինիստրատորներ և սպասարկողներ: 2) Համակարգը պետք է պաշտպանված լինի չլիազորված օգտատերերի մուտքից՝ օգտատիրոջ մուտքանավ և գաղտնաբառի ստուգման միջոցով: Վերը նշված սարքը պետք է լինեն նոր՝ վերջին սերնդի գործարանային արտադրության: Լրացուցիչ պայմաններ՝ Երաշխիքային ժամկետն առնվազն երկու տարի: Երաշխիքային սպասարկման ժամանակահատվածում՝ տեխնիկական սպասարկումը և բոլոր տեսակի վերանորոգումները՝ ներառյալ պահեստամասերն, իրականացվում են մատակարար կազմակերպության կողմից անվճար: Տեխնիկական սպասարկման ապահովումը պետք է իրականացվի սարքի արտադրողի պաշտոնական ավտորիզացված սպասարկման կենտրոնում և/կամ սերտեֆիկացված մասնագետների կողմից: Մատակարարման հասցեով սարքի բեռնումը,

			տեղափոխումը և բեռնաթափումը կատարվում է մատակարար կազմակերպության միջոցների հաշվին: Մոնտաժային աշխատանքները, տեղադրումը և փորձարկումը կատարվում է մատակարար կազմակերպության միջոցների հաշվին, պատվիրատուի կողմից նախապես տրամադրված տեղում: Տեղադրումից և փորձարկումից հետո մատակարար կազմակերպության միջոցների հաշվին պետք է իրականացվի սարքի հետ ամբողջական աշխատելու ուսուցում՝ առնվազն վեց աշխատակիցների համար:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Simsom в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/35 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	товарный знак	наименование производителя	технические характеристики
3			